



ՀԱՅԿԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԻՆԻՍՏԵՐԱՆԻ ԿՐԹԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿՐԹԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ

ԿՐԹԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵԿՆԻԿԱԳԻՏԱԿԱՆ

ՄԱՐԿԱԳՐԱԳԵՐՐԵ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵ ՊԱՏՐԻԱՐԻԱՐԱՆԻ



7

ՀԱՍՈՒՆԵԱՆ ՏՊԱՐԱՆ
ՀՈՌՎՄ



1. Կարողիկէ Արձագանգը առ այժմ կը հրատարակուի ի Հոռն: Առաջին վեցամսեայի բաժանորդագիւնն է մեկ մեծիս անոնց համար որ ի Կ. Պոլիս՝ Կարողիկոստանի մեջ, իսկ ի գաւառս՝ Եպիսկոպոսարաններու կամ Առաքնորդարաններու մեջ կ'ազեն բաժանորդագրուիլ: Ողղակի Հոռն ղրկելու համար՝ Չորս (4) ֆրանկ է: Հասցեն է. Collegio Armeno, 31 S. Nicola da Tolentino. Roma — Երբ ի մօտոյ Կ. Պոլիս փոխադրուի, ծաւալն ու ձեւը, ինչպէս նաեւ բաժանորդագրութեան պայմանիք վերջնականապէս պիտի ճշդուին: — Մեկ թիւը՝ մեկ դանեկան է:
2. Արձագանգը կը հրատարակուի Եաքաք օրերը:
3. Խմբագրութիւնս պատրաստուեալ չէ անպատճառ. կամ նոյնութեանը հրատարակելու իրեն զրկուած ո՛ր է յօդուած:
4. Ստորագրեալ յօդուածոց պատասխանատուութիւնը ամբողջովին կը մնայ գրողներուն վրայ:
5. Նամակ և յօդուածներ կը ղրկուին ողղակի խմբագրութեան:
6. Ձեռագիրներ ևս չեն դարձուիր:
7. Ծանուցիկսց համար մասնաւոր պայմանադրութիւն կը կատարուի:



ԿԱՐՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ

ԿՐԸՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ԾԱԲԱԹԱԹԵՐԹ

ՀԱՅ ԿԱՐՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆԻ

Առաջին Տարի

5 Օգոստոս 1911

Թիւ 7.

ՀԱՄԱԺՈՂՈՎ

ԱՄԵՆԱՍՏՈՒՐԻ ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ

Ի ՄԱՏՐԻՏ



(Շարունակութիւն)

Յուլիս 28 ին կը կատարուէր Համաժողովին վերջին մեծաշուք արարողութիւնը, անմահ յիշատակաց արժանի:

Երեկոյեան վեճ թափօրին փառահեղ շքեղութիւնը գերազանցեց ամէն ակնկալութիւն և հիացուց բոլոր ներկայ գտնուողները. այս փառաւոր հանդիսութեամբ Բրիտանոսի Տեառն մերոյ փառաց նոր յաղթանակ մը կը տօնէր համայն Կաթողիկէ աշխարհն և իւր հաստատուն հաւատքն կ'արտայայտէր հանդէպ փրկագործ սիրոյ Խորհրդոյն, հանդիսութիւն մը զոր հիացմամբ նկարագրեցին ամէն ազգի և դաւանանքի լրագրերը. պատկեր մըն էր այն՝ Սպանիական մեծագործ ոգւոյն և մանաւանդ կաթողիկէ հաւատոյ: Ամէն սպանիացի, մեծ թէ փոքր, հարուստ թէ աղքատ, եռանդուն

զգացմամբ և վառ բորբոք սիրով մասնակցած էր իւրովսանն այս հանդիսին փառաւորութեան, բոլոր քաղաքն երփնագոյն դրօշներով զարդարուած էր գեղաշուք ճաշակով մը, անհատական տուներու զարդարանքները կտրծես իրարու հետ կը մրցէին, նմանապէս տէրութեան բոլոր պաշտօնավայրերը և կառավարութեան լարձր պաշտօնակալներու բնակութիւնները թանկագին գորգերով և դրօշներով զարդարուած էին. հիւանալի տեսարան մը կը ներկայացնէին մանաւանդ այն պողոտաները ուրկէ պիտի անցնէր թափօրն: Ճարտարարուեստ յաղթական կամարներ կառուցուած էին ամէն պողոտաներու մուտքին և բոլոր հրապարակներու վրայ, թափօրի ճամբուն երկու կողմը ամէն մէկ 100 քայլ մէջ մէկ զարդարուն կոթող բարձրացած էր, որոց վրայէն երկայն դրօշներ կախուած էին, քահանայապետակն և սպանխական գոյները իրարու խառնուած՝ ի նշանակ սմբաժան միութեան քրիստոնէական կաթողիկէ հաւատոյ պաշտաման՝ հայրենեաց սիրոյն հետ: Թափօրի սկզնավայրէն մինչև արքունական պալատն բոլոր անցքին վրայ, երկու կողմը, ամէն դասակարգի զինուորներ շարուած էին, ձիաւոր և հետեակ, մեծ տօնախմբութեանց համազգեստները հագուած ակնախառն ի շող արևու ի պատիւ և ի փառս Մեծի Թագաւորին յաւիտենից. ամէն մէկ զօրախումբին առջև՝ պատուոյ դասակարգութեամբ շարուած էին նոյնին հրամանատար սպայները, և ետևի կողմը խռնած էր անհամար քաղմութիւն մը՝ որոյ թիւն մինչև հինգ հարիւր հազար կը հաշուէր: Բոլոր փողոցները ուրկէ պիտի անցնէր թափօրը, վարդարոյր ջրով ցօղուած ուղղուած էին: Բոլոր եկեղեցական դասն, եպիսկոպոսները, կանոնիկոսները և քահանաները որոց ամենուն թիւն երկու հազարէ աւելի էր, ամենքը իրենց յատուկ եկեղեցական զարդերով զգեստաւորեալ, S. Jeronimos եկեղեցին հաւաքուեցան, որն որ ելեկտրական և մոմեղինաց լոյսերու մէջ ողողուած էր:

Ժամ երեք ու կէսին յետ միջօրէի թափօրն սկսաւ կազմուիլ յիշեալ եկեղեցիէն. ամէնէն առջևէն հեծելագորաց ջոկատ մը կ'ընթանար փայլուն սաղաւարտներով և սուսեր ի ձեռին. ապա թափօրի մեծ խաչն մոմեղինօք, որոյ կը հետևէին զանազան Եղրայրութեանց և Ընկերութեանց անդամները խումբ խումբ, կարգաւ շարուած՝ որք կը զանազանուէին իրենց երեք հարիւրէ աւելի սեպհական դրօշներով. յետոյ կուգային կաթողիկէ երիտասարդաց ընկերութիւնները, ամէն ազգէ ու երկրէ՝ որք եկած էին այս հանդիսին ներկայ գտնուելու. առնց երփնագեղ մեծ և բարձր դրօշն ամենուն տեսութիւնը կը գրաւէր, իրենք ալ իրաւամբ կը պարծենային. վերջը կուգային քահանայից դասն և կանոնիկոսները. թափօրին կը մասնակցէին հա-

զարէ աւելի անձինք, ամէնքը այր մարդիկ գրաւելով քանի մը քիլոմէթր երկայնութիւն . սքանչելի էր այս տեսարանն : Ժամը 4 ին սկսան ելլել եկեղեցիէն Արքեպիսկոպոսները և Եպիսկոպոսները և հուսկ յետոյ Նուիրակ Կարդինալն ունելով Ամենասուրբ Հաղորդութիւնն, իւր աջ կողմն Մատրիտի Քահանայապետական Նուիրակն և ձախ կողմը Ամենապատիւ Հոգևոր Տէրն . առջևէն խումբ մը բուրվառակիր Մարկուսներու՝ որք շարունակ խունկ կը մատուցանէին աշխարհաց Փրկչին : Հազիւ թէ Ամենասուրբ Հաղորդութիւնն երեցած էր լուսազարդ մեծ տաճարին դրան առջև՝ քաղաքին մերձակայ բերդերուն թնդանթները անեղազոչ կ'որոտային ամէն կողմէ, եկեղեցւոյ առջևի բարձր սանդուխներու վրայ դէմ առ դէմ շարուած փողահար զինուորները կը հնչեցնէին արքայական բարեւ, սարսուռ ազդելով ամենուն, մինչ անդին քիչ մը հեռու զինուորական նուագախումբ մը մեղմ և հանդարտ քայլերդ մը կը նուագէր քաղցրալուր : Բոլոր բազմութիւնն որ խոնած էր հոն, երկու ծունկի վրայ եկած էր գլխիբաց երկըրպագու խոնարհութեամբ . առաջին զօրագունդին հազարապետ հրամանատարն, բարձրահասակ, պնդակազմ և ուղեզարդ զինուորական մը, կտրուկ հրաման մը լսելի ըրաւ ամենուն իւր կորովի ձայնով, բոլոր զինուորները միանգամայն խոնարհեցան ծնրադիր յարգութեամբ, և ինքն արագ և սեղմ շարժուածքով մը վար սուաւ իւր սուրն, փողերն և նուագախումբն անմիջապէս լռեցին, և Նուիրակ Կարդինալն եկեղեցւոյ առջևէն, որոյ բարձրաւանդակ դիրքն կը տիրէ բոլոր Մատրիտի վրայ, Ամենասուրբ հաղորդութեամբ առաջին օրհնութիւնն տուաւ այն բարեկրօն և քրիստոսասէր ժողովրդեան . անեղ ու սրտաշարժ տեսարան :

Ամենասուրբ Հաղորդութիւնն զետեղուեցաւ խորանածե բարձրագահ կոռքի մը վրայ, արուեստակերտ շինուած մը՝ ամբողջ արծաթածոյլ ծալքերով կախուած էին սկիւթել թանկագին ձեռագործներ, (յետոյ այս շինուածն իբրեւ յիշատակ ապագայ ժամանակաց գրուեցաւ Մայր եկեղեցւոյ Աւագ խորանին ետեւի կողմը բարձր պատուանդանի մը վրայ) : Այս կոռքը կը տանէին 12 պալատական թիկնապահներ, երկու կողմը շարուած էին երկու կարգ թիկնապահներ առաջին կարգն նիզակաւոր, երկրորդն սուսերի ձեռքին . առջևը կարգաւ շարուած Արքեպիսկոպոսները և Եպիսկոպոսները կ'երթային Կարդինալ Նուիրակն որոյ աջ կողմն էր Մատրիտի քահանայապետական Դեպտանն և ձախ կողմն Ամենապատիւ Հոգևոր Տէրն : Թափօրն սկսաւ յառաջանալ մեծ կարգաւորութեամբ որոյ անձամբ կը հսկէին Մատրիտի զինուորական և քաղաքական կառավարիչները չըջապատեալ հե-

ծելագոր թիկնապահներով, իսկ զինուորական կարգադրութեան կը հսկէր բանակաց ընդհանուր Հրամանատարն: Բոլոր անցքին վրայ տեղ տեղ փոշահարմերու խումբեր կ'եցած էին սրբ արքայական բտրեը կը հնչէցնէին Ամենասուրբ Հաղորդութեան անցած ժամանակ և նուագախումբեր ընտիր կտորներ կը նուագէին, հրամանատարներու տուած հրամանին վրայ բոլոր զինուորները յարգութեամբ երկու ծունկի վրայ կուգային՝ խոնարհեցնելով իրենց զէնքերը մինչև գետին: Թափօրն կը յառաջանար միշտ յամրաքայլ՝ երկու կողմը շարուած զինուորաց և ահագին բազմութեան մէջէն անցնելով՝ որ ունէր ի ձեռին ռստեր և ծագկի փունջեր զորս կը սփռէր ճանապարհի վրայ և կ'աղագայէր միաբերան՝ Կէցյէ, Ովտանա, Viva Jesus Sacramentado, ի սրտէ և հաւատով:

Այս պապոտային ծայրը իբրև մուտք ի մեծ հրապարակն՝ մեծակառոյց յաղթական կամար մը շինուած էր, շատ ճաշակաւոր. սպանիացի գործաւորներուն նուէրն էր, ինչպէս յայտնի կ'ըլլար վրայի ոսկետառ վերնագրէն, Սպանիայ զանազան քաղաքներու և գաւառներու զինանշաններով, գրօշներով, ծաղիկներով և արմաւենիի ճիւղերով զարդարուած, երեք անցք ունէր: Երբ Ամենասուրբ Հաղորդութեան ներքեւէն կ'անցնէր, յանկարծ քկսան անձրևի պէս վարդի տերեւներ տեղալ կամարին վրայէն, միանգամայն կամարէն հարիւրի չափ ձերմակ աշաւններու խումբ մը երամ երամ թռաւ ամէն ուղղութեամբ:

Հրապարակին մէջ տեղ խորան մը շինուած էր տպան և հինգ մէթրօ բարձրութեամբ, փառաւորապէս պարզարուած: Հրապարակին մէջ բոլորածէ շարուած էին երկու կարգ ձիաւոր և երկու կարգ հետեակ զօրքեր, փայլուն զգեստներով, իսկ խորանին երկու կողմը բանակիճ սպայակոյտը, հազարապետներ, հրամանատարներ. հոն ներկայ էին նաև պատերազմական նախարարը. Մատրիտի զինուորական և քաղաքական կառավարիչները, քաղաքային բարձր պաշտօնատարներ, ամէնքը իրենց պաշտօնական հագուստներով և նշաններով: Խորանն կը հայէր դէպ ի մեծ պողոտան, Մատրիտի ամենէն մեծն և լայնն, Calle Major, որ ուղղակի արքայական պալատն կը տանէր, այս խորանին վրայէն երկրորդ օրհնաւթիւնն տրուեցաւ: ամէնքը, ժողովուրդ և զինուորք, ծունկի վրայ էին, զինուորական նուագախումբն ընտիր կտորներ կը նուագէր:

(Շարունակելի)



ԲՈՐԹՈՒԳԱԼԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ ԲՈՂՈՔԸ

(Շարունակութիւն)

« Բորթուգալի մէջ հանրային կարծիքը Բաժանումը չէր պահանջեր . և մեր ներկայ դիպուածին կրնայ յարմարիլ ինչ որ ի 1880 ընդհանուր ծափերու մեջ կ'ըսէր Լիթրէ ի Գաղղիա . « Կաթողիկէութիւնը Գաղղիացւոց մեծամասնութեան կրօնքն է . և այս բազմութիւնը խորապէս պիտի վշտանար եթէ իւր պաշտամունքին կերպարան մէջ խափանուէր : Այս հիմնական պայմանին արհամարհանքը կը պատրաստէ իբր տեսական փիլիսոփայի խորհող մէկու մը՝ զազափարական ծանր յուսախաբութիւններ , և վարչական մարդու մը՝ ոչ նուազ ծանր քաղաքական պատրանքներ :

. . . Ազատական յօրինուածութիւններն ու ռամկավարական վարչութիւնք իբր իրենց հիմնական սկզբունքներուն մին կը դնեն նաև կարծիքի յարգանքն և մեծամասնութեան գաղափարին ու կամքին հետ ձայնակցութիւնը . սակայն և այնպէս , կաթողիկէութիւնը զաւանդող բորթուգալցիներու մեծամասնութիւնը՝ ըստ պաշտօնական մարդահամարի , ջախջախիչ ըլլալով հանդերձ , այդ մեծամասնութիւնը սուսթուր կոխուեցաւ , գոհուեցաւ հակակաթողիկէից և ազատախոհներու աննշան խմբակի մը պահանջանաց : Այս յանդուգն բայց սակաւթիւ փոքրամասնութիւնը յաղթանակեց . այս սփ մը մոլեռանդներու , հակակրօններու թերազրութեամբ է որ 20 Ապրիլի օրէնքը վճռուեցաւ : . . .

Այս օրէնքը չորս բառով կարելի է համառօտել . Անիրաւութիւն , ճնշում , Կողոպտում . Խայտառակութիւն .


Այս օրէնքն հակառակ է դրախտ աստուածային իրաւանց . վստմիկ կաթողիկէ Եկեղեցւոյ օրէնքին և հոգևոր անկախութեան բացայայտ կերպով կը հակառակի , ինչպէս նաև Հասարակաց և Կանոնական իրաւունքի և Քաղաքական ու Բնական օրինոց .

Այս օրէնքը թունաքաղութիւն է , ճնշում գործելով պաշտամունքի գործադրութեան վրայ , ննթարկելով զայն աշխարհական ժողովներու քմահաճոյքին . . . ճնշում կը գործէ կրօնական ուսուցման մէջ , ամէն ազատութենէ զրկելով զայն . ճնշում կը գործէ ընծայացուներու պատրաստութեան և Կգերանդներու վարչութեան վրայ . ճնշում նաև Եպիսկոպոսոց ու հաւատացեցեցեց՝ և սոցա Սրբ . Քահանայապետին հետ յարաբերութեանց մասին . . .

Կողոպտում է այս օրէնքը, որ Կաթողիկէ Եկեղեցւոյ իրաւունք կը զլանայ շարժուն և անշարժ ստացուած ունեւնալու, իրաւունք զոր ունի Եկեղեցին իբրև ընկերութիւն մը արտաքին, տեսանելի, կատարեալ և անկախ: Տէրութիւնը կը գառնայ միակ ստացուածատէր՝ այժմէն և առ յապա իւրացնելով անձեռնմխելի եկեղեցական ստացուածները... իր ճիշդաբ միշտ նոյնն է, այսինքն՝ օրէնսդիրին կամայականութիւնը. իւր իրաւունքը մէկ է միայն՝ բռնութեան ոյժը... և սպառնալիքի սուրբ կախում է քահանայից գլխուն վերև՝ ահարկու:

Այսպէս կ'աւանդուեց և ծաղր է կղերին՝ այդ օրէնքն որ զայն կը հարուածէ ու կը ճզմէ, վերածելով պաշտօնեայի մը վիճակին. մէկդի դնելով եկեղեցական նաւիրապետութիւնը. Եպիսկոպոսաց պարտադրելով placet ի պահանջը, անիրաւ, անհիմն և անդէպ: Ծաղր և խայտառակութիւն, զոր 150րդ յօդուածով կը նետէ կղերին երեսին դէմ, ուզելով գրգռել զայն ուրացութեան, անբարոյութեան, խոտտանալով դրամ և ամուսկան: Հնար է պատահին տկարութիւններ, թշուառութիւններ իսկ: Կարելի է գտնուին այնպիսի քահանայք որք արուեստ նկատելով իրենց սրբազան պաշտօնը, պիտի ըսին. լինի՞նչ կամի՞ք տալ յ. ապականեալներ և փախստականներ պիտի կարենան գտնուիլ: Սակայն բարթուղացի կղերը իւր ահագին մեծամասնութեամբ պիտի մերժէ այդ նախատինքը. քանզի ան լաւ կը հասկնայ՝ եկեղեցական կուսակրօնութեան բարոյական ու ընկերական պատշաճութեան ամենաբարձր պատճառները. « Կաթողիկէ կղերին անհերքելի գերազանցութիւնը կուսակրօնութեան արդիւնք է յ ըսաւ Յ. տըՄէսթը:...

(Շարունակելի)



Մեկնութիւն Աւետարանի շուս Մաքրոսի

Կ'ուզենք դարձեալ, Ս. Յովն. Ողկերեւանէն քաղելով, (ի Մատթ. Գ. Ա. Ճառ, ա) քանի մը ընդհանուր շինիչ գետոգութիւններ դնել Ս. Աւետարաններու վարդապետութեան վրայ. կարծես թէ այժմէական թարմութիւն և պարագայից յարմարութիւն ունի Սուրբ Վարդապետին գոհաբեղէն գրութիւնը:

1. Գիտնոց, կրիտիկոսաց ու փիլիսոփայից զարգարուն և ակնախտից զբոսութիւնք, Ս. Աւետարաններու քով ունայնաբանութիւն կ'երևին, շարունակ իրարու

հակասութիւններով լի իրարմէ թշնամի. անմիտ, անպիտան և հոգեկորոյս բաներ վարդապետելով, մարդկային ցեղի բարոյականը ապականելով, բնութեան կարգերը վեր ի վայր շրջելով, այնպէս որ կրնայ ըսուիլ թէ՝ « Դիւաց գիւտք էին ամենայն, և արտաքոյ քան զբնութիւնն բանքս վկայեսցէ ինքն իսկ բնութիւնն, սոսկացեալ ի բանիցն »:

2. Իսկ Աւետարանք միաբան են իրարու հետ՝ մանաւանդ յէականաւ. մարդեղութիւն, խաչելութիւն, յարութիւն, համբարձում, դատաստան. Գրիստոսի պատուիրաններն ու աստուածութիւնը եւ եթէ առերեւոյթ անմիաբանութիւն մը կայ մանրամասնութեանց մէջ, առ ալ իրենց ճշմարտախօսութեան ապացոյց է, դաշնակից համաձայնութեամբ գրուած չըլլալուն համար: Եւ ահա աշխարհիս տիրեցին « չմիաբանեալքն », ահաւոր թշնամեաց դէմ մաքառելով. « Ընդ ամենայն երկիր ել բարբառ նոցա, մինչև ի ծագս աշխարհի են խօսք նոցա » (Սղմ. ԺԲ. 5.): Հակառակորդաց առջին ալ կը կարգային. և իրենց խօսքերն ոչ գոք գայթակղեցուց: Մաքառողն ու ձկնորսը այնպիսի հիմնային բաներ կը խօսէին, զոր արտաքին իմաստունք և ոչ երազի մէջ անգամ կրնային տեսնել: Հաստատութեամբ կը պատմեն ու կը համոզեն. ո՛չ միայն երբ կենդանի էին, այլ մանաւանդ իրենց մահուընէն վերջը. ո՛չ մէկ քանի կամ հազարաւոր բիրտաւոր մարդիկ, այլ քաղաքներ, ազգեր, աշխարհներ: Եւ իրենց քարոզածներն մարդկային բնութենէն գեր ի վերոյ էին, երկնաւոր բաներ. աշխարհաւորացութիւն. ապիւր վարք. աղքատ մեծութիւն. նորանշան ազատութիւն ու ծառայութիւն. կեանք և մահ և առաքինութիւնք: Եւ դարհուրելի հալածանաց ու տանջանաց մէջ: Եւ կը խոսարհէին անոնց առջև տգէտներ և իմաստուններ, գերիներ և ազատներ, թագաւորներ ու զօրքեր, քաղաքակիրթներ ու բարբարոսներ:

3. Եւ այս խոսարհ ձկնորսներուն քարոզած բանին աստուածային վստիմութեան գրոշմն ունէին: Փիլիսոփայք և ոչ երազեր էին՝ Կուսուքիւնք. աղիւսուքիւնք. պահիք, ևնո իսկ անոնք ոչ միայն ցանկութիւնն ու չար գործերը կը մերժեն, այլ նաև յոռի նայուածքն և թշնամական խօսքերը, աղաղակն ու բարկութիւնը. ամբողջ աշխարհքը լեցուցին կուսութեան տունկով: Աստուածեղէն վարդապետութիւնը անկուեցաւ ու հաստատուեցաւ. և օր քան օրէ կ'աճի ու կը զարգանայ. իսկ փիլիսոփայներուն կը խաբիւլի կը հալի սարգիստայաններու նման: Բանցի գիւաց վարդապետութիւն է, աղտեղի, մութ, ծանձրալի, ծաղրելի և ապականիչ:

4. Պարզ, աշխատաւոր ու տգէտ մարդիկ ո՛չ կարողութիւն ունին և ո՛չ ժամանակ փիլիսոփայ գիտնոց այն սնոտիաբանութիւնները սորվելու. մինչդեռ Գրիստոս քիչ ու յայտնի խօսքերով սորվեցուց ինչ որ պէտք է ընել առաքինութիւններ շահելու համար. արանց և կանանց, տղայոց և մինչև իսկ անմտաց գիւրամտչելի. այս է ահա ճշմարտութեան նշանը:

5. Արդիւնքն ալ զայս ապացուց: Ամէնքն ալ սորվեցան այս երկնաւոր վարդապետութիւնը. այլ և մրցակից եղան. ո՛չ միայն քաղաքներու և գիւղերու մէջ, այլ և լեռանց գլուխը. քանզի հոն ալ կը տեսնենք զգաստութիւնը, անթիւ մարդոց որ երկնաւոր քաջութեամբ սրովբէանման հանդիսացան: Եւ ձկնորսաց գրած առաքինութիւնները՝ տարիներու, հասակներու, սիսթէմներու չափուած չեն, այլ ամենուն անխտիր յարմարական, որոյ վախճանը՝ երկինք, ճարտարապետն՝ Աստուած, օրինադիրը՝ Գրիստոս վարձքը՝ ո՛չ թէ դասինի տերն. կամ ձեթենու պսակ, և ո՛չ ռոճիկ կամ պղնձի պատկերներ, պաղ և արհամարեալ միսթարութիւն, այլ կեանք անվախճան, և Աստուծոյ որդեգրութիւն, հրեշտակաց ընկերակցութիւն և յաւիտենական երջանկութիւն Գրիստոսի հիտ:

6. Այսքան գեղեցեկ վարդապետութիւնն յսելու և սորվելու համար եթէ դանդաղին հաւատացեալք, Սուրբ վարդապետը ինքն ալ պիտի ծածկէ զայն՝ ըսելով. « Եթ' տոք սուրբ բաները շուններուն. և մի՛ նետէ՛ք ձեր մարգարիտը խոզերու առ-

շն » (Մատթ. է. 6.) : Տէ՛ր Աստուած, ո՞վ ոտքի տակ պիտի առնու գայս, ո՞վ պատուականագոյն պիտի չհամարի : Ո՞վ աշխարհային գուարճութեանց աւելի պիտի պարագի և մտիկ պիտի չընէ Աստուծոյ որ կը խօսի : Մեր վարուց բարութիւնն ու առաքինութիւնը միայն խօսքով պիտի ըլլայ : Աստուած կը հրամայէ ոչ միայն լսել, այլ և իր պատուէրները կատարել, մինք ինչու՞ լսել անգամ չենք ուզեր :

7. Ե՛րբ ուրեմն պիտի կատարենք այս հրամանները. ինչու՞ կը դանդաղինք ու կը վեհերինք, թէ պէտ և յոյժ թեթեւագոյն են : Եթէ մէկը մեր խօսած ատեն մտիկ չընէ, կը բարկանանք, և մի՛թէ Աստուած չպիտի՞ բարկանայ՝ երբ մենք անոր խօսքը կ'արհամարհենք՝ ցրուած մտքով : Աշխարհային ամէն բան կը հաշուենք ճշգրտօրէն, բայց թէ երկնքէն ո՛րչափ հեռու ենք՝ չենք խորհիր : Եթէ փութայինք, վայրկենի մէջ կը հասնէինք անոր՝ Աստուծոյ շնորհաց օժանդակութեամբ :

8. Երկրաւոր բաներու մեծաւ հետաքրքրութեամբ կը հետապնդինք. բայց ի՞նչ վարք ունեցանք, ո՛րպիսի առաքինութիւն, զայն և ո՛չ իսկ կը մտածենք : Հա՛պա հանդերձեալ բարեաց ի՛նչպէս պիտի հասնինք, քանի որ և՛ ոչ իսկ խօսքը կ'ուզենք լսել :

9. Եթէ մինչև հիմա չըրինք, գո՛նէ հիմա ընենք. քանզի ոսկեղէն քաղաքին մէջ պիտի մտնենք՝ Աստուծոյ հրամանաւ և առաջնորդութեամբ Մատթէոսի : Եթէ տեսնէ մէկը ծոյլ և անյօժար յունկնդրութիւն, դուրս կը վտարէ. քանզի արքունական և ամենապայծառ է այդ քաղաքը և ամբողջն արքունիք :

10. Բանանք ուրիմն : մեր մտաց դռները, ընդարձակենք մեր լսելիքը, և դոգալով երկրպագենք Թագաւորին, և մեր մտքերը լուսով պիտի ողողուին : Խորհրդական լութեամբ ամբողջուինք. քանզի հրեշտակաց արքային գիրը պիտի կարդացուի : Եթէ այսպէս պատրաստուինք, Հոգւոյն սրբոյ շնորհքը ճշմարտութեամբ պիտի առաջնորդէ մեզ, և պիտի հասնինք մինչև անմահ Թագաւորին ակոռը և այն ամէն բարիքներն որ հոն բխողաւ կան :

Գ. Վ. Թ.



ԱՅՈՒՆԻ ԱՅԼԻՔ

Ազատագրութիւն իր 602 թուոյն մէջ սիրայօժար և ի շատագովութիւն իւր կը տպէ իր Էնկիւրիի Էջմիածնական թղթակցին նամակին մէջ սա պարբերութիւնը. Կաթողիկ Կղերը « կը համոզէ անհատները և փրօփականաւ կ'ընէ թէ այս բոլորը Դաշնակցութիւնն է որ կը թելադրէ, թէ անոր նպատակն է ազգը իրար ձգել, ու խռովութիւն սերմանել վերջ՝ Հայ Եկեղեցիին գիրկը տանել Կաթողիկները » : Ուրեմն Ազատամարտն ալ կ'ուզէ ըսել թէ Դաշնակցութիւնը յիստորիկ անհասկնալիք, փրօփականաւ չընէ, չքեղարեւ ազ-

գը իրար ձգե՛ր, ևն. այնպէ՞ս... Արդ դարձուցէք նայն թուոյն առաջին էջը, երրորդ սիւնակ, դէպ ի վերջ. « Կաթոլիկ — Հայերու սահմանադրական տագնապը ոչ նուազ ուշագրաւ երեւոյթ մը ոտացաւ... Գաւառը սկսաւ շարժիլ (!) ամեն կողմէ բողոքներ կը տեղան... տխրահոգակ Հովուական թուղթը... կը սպասենք գաւառի պոռթկումին (sic) այդ ցնդարան պատգամներուն դէմ: Մենք կը ցանկանա՛նք որ Կաթոլիկ Հայերը սահմանափակեն իրենց կղերին ոտնձգութիւնները, պահեն իրենց ներքին ինքնուրոյնութիւնը հռոմեական — ռասիական Փրօփականտային ոգիին դէմ, մինչև որ... կարելի ըլլայ օր մը զուտ աշխարհական և զուտ ազգային Սահմանադրութիւն մը ունենալ... Ուստի ԿԸ ՀՐԱՒԻՐԵՆՔ գաւառի հայ (Կաթոլիկ) ժողովուրդը ըմբոսանալ կղերական լուծին դէմ, և ուժ տալ իր ներկայացուցիչ վարչական ժողովներուն և Երեսփոխաններուն »:

Կրնա՞ք նաեւ, թիւ 603, էջ 2, խմբագրականին մէջ՝ յորում կը փառարանէ ապստամբութիւնը հոգեւոր իշխանութեան դէմ զոր լուտանօք կը ստորնացնէ, կարդալ սա տողերը. « Մենք այսօրան չափաւորութիւնն (!!!) ալ ԱՐԻՈՒԹԻՒՆ կը նկատենք Հայ — Կաթոլիկէ Երեսփ. ժողովին համար. և երբ այս հաստատակամ վերաբերումը համեմատութեան մէջ դուռի դռն տարի մը առաջ Հայ — լուսաւորչական Երեսփ. ժողովի կողմէ Իզմիրլեան Կաթոլիկոսի չարաբաստիկ Կոնգակին հանդէպ ցոյց տրուած անարդարանալի համակերպութեան հետ, կը տեսնուի թէ գիտակցութեան նժարը, գէթ այս մասին, շատ ուրոշ կերպով կը հակի դէպ ի Հայ — Կաթոլիկ Երեսփ. ժողովը »: — Արդ վերջին կտորը լաւ պէտք է հասկնալ. կը զուգորէ էջմիածնականաց և Կաթոլիկեայց Երեսփ, ժողովները: Արդ էջմիածնականք Իզմիրլեան Կ.ին եկեղեցական իրաւանց պահպանողական Կոնգակին առջև խոնարհեցան. իսկ Կաթոլիկեայ Երեսփ. ժողովոյ մի մասը՝ ըմբոստացաւ Թէրզեան Կաթոլիկոսին եկեղեցական իրաւանց պահպանողական Կանգակին առջև. անցողակի ըսենք՝ ինչ՝ տխուր զուգակշիռ. որպիսի մահազդեցիկ զովեստ Կաթոլիկ ներկայացուցչաց համար, և այն՝ Ազատամարտի պէս թերթէ՛ մը... Dis-moi qui te loue, et je te dirai qui tu es!... Բայց դառնալով Ազատամարտին, կը հարցնենք. Արդեօք այս ամէնը չէ՞ մի թէ հաւնոգե՛լ անհասները, փրօփականս ընե՛ր, թերսդրե՛ր, ազգը իրար ձգե՛ր: — Որ՞ Կաթոլիկէ հայ պիտի չտեսնէ թաքուն և դաւաճան նպատակը, թէ հայ էջմ. լրագրութիւնը ինչու՞ կը զբաղի հայ Կաթոլիկեայց խնդրով, այն՝ որ սիստեմաբար կը լռէ անոնց ո՛ր և է պատիւ բերող բաներու վրայ. այն՝ որ իբր թարգման էջմ. վարչութեան, Բանկալթիի գերեզմանատան

մէջ աի մը հող կը ժխտէ կաթողիկեայց, որոց անժխտելի իրաւունքն է այն՝
գոր կը ճանչնայ նոյն իսկ Թուրք վարչութիւնը: Այս թեւագրութիւնք,
այս գրգռութիւնք, ըմբոստութեան այս անամօթ հրաւերներն ու՞ր կ'ու-
զեն տանիլ հայ կաթողիկէներն, և պիտի ըլլայ՝ արդեօք մի անկեղծ կաթու-
ղիկէ հայ որ չտասանի, խոյս չտայ անկրօնութեան այսքան մերկապարու-
նոց ռահվիրայներէն...

Տաճար՝ Կրօնական Շարաթաթերթ հայ էջմ. Պատրիարքարանի, իւր
այս տարւումն 23 թուոյն մէջ՝ Հայ Հռոմեական ժողովուրդը Թեոքեանի դէմ
մակագրութեան ներքե դառն յօդուած մը կը հրատարակէ: Ասոր մէջ կը
փառարանէ՝ — ծայրայեղ գովասանքներով — Կաթողիկէ ժողովրդէնէն
ոմանց ըմբոստութիւնը իրենց օրինաւոր Կաթողիկոսին և Նորա՝ եկեղեցւոյ
բնիկն վրայ իսկ գործածած աստուածատուր իշխանութեան դէմ: Այս հե-
րետիւտամիտ յանդգնութիւնը՝ Տաճար կ'անուանէ « ԻՆՔՆԱԳԻՏԱԿՑՈՒ-
ԹԵԱՆ հոյակապ շարժում », « ծառանալ ժողովրդային կամքն անտեսելու
ձգտումին դէմ ». — կը դրուատէ ժողովրդեան (այսինքն ոմանց դաշնակցա-
կանամտաց) « չպիտի կարգացուի » ազազակը. պարտաճանաչ գտնուող ժո-
ղովրդեան, քահանայից և կրօնաւորաց դէմ ևս կ'արձակէ թշնամանքի սը-
լաքներ:

Յիրուսի ապշահար մնալու բան է թէ « Տաճար » սրբազան անուան
ներքե հրատարակուող ինքնատապ Կրօնական և Պատրիարքարանի օրկան
թերթ մը այսպէս կը գովէ և կը խրախուսէ տաճարապիղծ սրբապգծութիւն-
ներ: « Տաճար » ևս, ըստ քինականգիր թերթերու սովորութեան, Կաթողիկոս
— Պատրիարք մը կը գրկէ ո՛ր և է պատուանունէ, մինչդեռ թուրքերն իսկ
առանց մէկ երկու մակդիրի թնաւ չեն գրեր: « Տաճար » ևս սպաստամբնի-
րու հետ Պիղատոսի աստեանին տուչ և կը գոչէ « Խաչեսցիլ »: Դարերէ ի
վեր կաթողիկէութեան դէմ անուցուած սխերու և վրիժուց ժայթքումն է
այս. հիմակ գրչի հալածանք: Արդեօք Տաճար նոյնպէս պիտի գովէ՞ ու
փառաւորէ երբ հայ ժողովրդեան մի մասը էջմիածնի Կաթողիկոսին կոն-
դակն պատռէ, « Ի խաչ հա՛ն » ազազակէ... տարակիյս չկայ. քանի որ
այս սպօրինի ժպրհութիւնները կ'անուանէ « ժողովրդեան ինքնագիտակ-
ցութիւն »: — Արդ Տաճարին այս վարմունքը Կրօնականին անկրօնու-
թիւնը կ'ապացուցանէ. որպիսիք լազմաթիւ են էջմիածնական եկեղեցւոյ
մէջ, նոյն իսկ Եպիսկոպոսներ !!... որք հաւատոյ մասերուն վրայ ուրացում-
ներ կը գրեն: « Դուք ո՛չ մտանէք, և որոց մտանեն, չտաք թոյլ մտանել »

(Մտթ. իգ .13.), « Թողէք զծանր ծանր օրինացն . . . ԶՀԱԻԱՏՍՍ » (23.) : Արդէն Տաճարին յօգուածը գրեթէ ընդօրինակութիւն մըն է Ագասաւարտե, Դաշնակցականներու անկրօն թերթը :

Կ'ըսեմք Տաճարին որ ինքն ալ յանուն կրօնից տաճարակողոպուտ չըլլայ, կամ անունը փոխէ, շաւ եւս : Ուշագիւր ըլլայ երկու մեծ և յատկանշական անյուսալի դասերու որ այս վերջերս էջմիածնական եկեղեցիին տրուեցան. Նախ՝ Յոյն-քոյր-եկեղեցիէն, որ սինոդական որոշողութեամբ բացէ ի բաց մերժեց հայ Պատրիարքարանի ի հոգեւորս հոգսրդակցութեան տաւալարը՝ զինուորներու մասին, անուղղափառ կամ չարափառ նկատելով զիրենք. և այս մասին Արարաց՝ — Էջմիածնայ Կաթողիկոսական Աթոռոյ օրկան! — կը գրէ, ինչպէս Տաճար յառաջ կը բերէ նոյն թուոյն մէջ, թէ՛ հայ « ԵԿԵՂԵՑԻՆ » իր իսկական շահերն պէտք է ունենայ, և այդ ՇԱՀՈՒ տեսակէտից պէտք է յարարեցութիւն պահէ ուրիշ եկեղեցիներու հետ » : Նո՞ր կը սթափին. եթէ յոյները չմերժէին, այդ ակզռուեցր սրբազան չէր՝ հապա՛ւ. հաղորդակցութիւն յունաց հետ. հաղորդակցութիւն անկլիքաններու հետ. հաղորդակցութիւն զինքը եկեղեցի անուանող ո՛ր և է խումբի հետ. անխտրութիւն Նոյեան տապանի պէս. չխորհելով թէ ՄԻ է ճշմարտութիւն մի հաւատք, մի եկեղեցի. « Հաւատամք ի մի միայն . . եկեղեցի » :

Երկրորդ դասը տրուեցաւ բողոքական եկեղեցիէն, որու Պատուելի մը հայ—լուսաւորչական և բողոքական դպրոցներու միացումը յաւէտ վնասակար կը գտնէ . . . բողոքականութեան. որովհետեւ՝ ի մէջ այլ բազում գլխոց, « լուսաւորչ. եկեղեցւոյ կենսական բարեկարգութիւնն ահա՛ր կը կարծուի » : որովհետեւ՝ « առջեւ կը բացուի անկրօնութեան և կամ կրօնական անտարբերութեան վտանգը » : և ասոնց իբրեւ թէ պատասխան տուող էջմիածնականը կ'ըսէ. « Ծջմարիտ է թէ լուսաւորչ. վարժարանաց մէջ ցարդ դժբախտաբար ըստ արժանւոյն շեշտուած չեն կրօնական ճիւղեր և ֆրիսոնեական կեանք : Յայտնի անկրօն կամ անգոյն ուսուցիչներ ալ գործածուած են : Այս ընթացքին արդիւնքն ա՛յնքան աղիտարեր եղաւ ազգին ու եկեղեցիին » : Բողոքականը շատ պատճառներ թուելէ յետոյ, կը յարէ և զայս. « Դաշնակցականք բոլոր ուժով կը ջանան կ'աշխատին ձեռք ձգել դատարարականութեան ղեկը. և ինչպէս կը տեսնուի, անոնց ուղղութիւնն է հակառակիլ ընդհանուր կերպով կրօնի և բարոյականութեան : Հետեւաբար այն պարագային յօգս կը ցնդին ներկայ բոլոր խոստումներն և մեծ վտանգի պիտի ենթարկուին ո՛չ միայն բողոքական ուսանողներ, այլ և լուսաւորչական եկեղեցիին » : (Տ. Բիւզանդիոն, Թիւք 4463—4) :

Կը դիտենք նաև թէ վերջերս հրատարակուած Պուլիսը — եկեղեցու-
կան Կանոնագրի մը մէջ երկու յօդուածներ կան, ուր Հայ եկեղեցին ու-
րակուած է իրր հերձուածող և արգիլուած է անոնց հետ կրօնական հա-
ղորդակցութիւն (տես Ազատամարտ. 639)։

Հետեւաբար Տաճարին կ'ազդարարենք վտարել իրմէն անտարբերու-
թիւնը, կուսակցականութիւնը, քինականութիւնը, հոգեւորական բարձր
իշխանութեան արհամարհանքը, և մանաւանդ « շահու տեսակէտից » ան-
խտրականութիւնը, ապա թէ ոչ կը յիշեցնենք իրեն Բազմամու վարդա-
պետութիւնը (Յայտ. ք. 13 — 14) և տաճարի մէջ Բրիտանիոյ գործածած
խարազանը (Մտթ. իւ. 12 և 13). « Տուն իմ տուն ազօթից կոչեացի » : . . .

✱

Լեոնեան Բ. Հայ Դպրոցէն մասնաւոր պատուիրակութիւն մը գնաց Օսմ. Դե-
պտմատուն ցաւակցութիւն յայտնելու՝ ի Պօլիս պատահած աղէտալի հրդեհին համար
և Պատերազմական Նախարար Մանուտ Շէվքէթ Բաշայի որպիսութիւնը հարցնելու
Ընդունեցաւ խորհրդական և Գործակատար Վսեմ. Սէյֆէտտին Պէյ, ու կէս ժամու չափ
սիրալիք տեսակցութիւն մը տեղի ունեցաւ։ Պատուիրակութեան մենկէլէն անմիջա-
պէս յետոյ Սէյֆէտտին Պէյ իր քարթերը ղրկեց ի շնորհակալութիւն։



Տխրութեամբ համակեցանք լսելով Արհի. Յովհ. Եպ. Մուրատեանին
մահուան գոյժը։ Հանգուցեալը յ2 Յունուարի 1840 ի Տխարպէքիւր ծնած,
աշակերտեցաւ Զմմառու վանքին, ուր և քահանայացաւ։ Այլ և այլ թե-
մեր առաջնորդութեան պաշտօն վարեց ի միջի այլոց ի Կեսարիա, ՎԱ-
տանա, ի Կիւրին, ի Լիվորնոյ և ի Պարսկաստան։ 1901 ին Եպիսկոպոս
օծուեցաւ Մարաշու Վիճակին վրայ, բայց քանի մը տարի վերջը հրաժա-
րելով իր Աթոռէն, 7 Օգ. 1905 ին Կիսամու տիտղոսն առաւ և առանձնա-
ցաւ ի Զմմառ, ուր Յուլիի 18 ին փոխեցաւ յատեացա՝ ցանկալի մահու-
ամբ։ Կարի խղճամիտ, բարեսիրտ ու բարեկրօն էր։ Հանգիցէ ի խաղա-
ղութեան։

Փ. Պիւսկի
Տնօրէն Պատասխանատու

ԲՈՎԱՆԴԱՅՈՒԹԻՒՆ

Հանձնողով Ամենասուրբ Հաղորդութեան ի Մասիս	էջ 71
Բողոքադադի Եպիսկոպոսաց Բողոքը	» 75
Մեկնութիւն Աւեստրակի ըստ Մասքոսի	» 76
Այլ և այլ	» 78

Հրահրւած է տեսակ մը « Տեսութիւն Կանոնագրի նոր
Ծրագրի փայ » յորոշուած: Լուրջ ֆենադատքիւն մըն է հաւե-
րաւաւոր ծրագրիւն, եւ ցոյց կուտայ սնոր գլխաւոր կիսերը որ
հակառակ եւ կաթողիկէ կրօնի եւ եկեղեցական կանոնաց: Եւս
կարեւոր պարունակութեանը պատճառաւ յառաջիկայ բոլոր պի-
տի տակ սնոր փայ մեր խորհրդածութիւնները:

